



ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36  
հեռ. (0264) 6-15-11  
էլ. հասցե: info\_gavar@aarhus.am

N AA - 009

« 15 » Մայիսի 2014թ

ՀՀ ԲԼԱՊԱՆՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՊԱՐՈՆ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Տեղեկատվությունն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գրիգորյան

Մայիսի 13-ին Արգիճի գետից սևվող ՓՀԵԿ-ի խողովակները կրկին պաթեյլ են ու ողողել շուրջը շուրջը: Պայթած խողովակների պատճառով քառասյին վիճակ է ստեղծվել տարածքում: Ջուրը ոչ միայն ողողել է գյուղացիների ցանքատարածքներն, այլև հսկայական փոսեր են առաջացել, հոսքը հասել է մինչև տեղակայանքներ:

Տեղեկացնենք, որ այս «Արգիճի» ՀԵԿ-ի կառուցմանը հանրությունը դեմ էր արտահայտվել, բնապահպաններն ու գյուղացիները պահանջել էին, որ նոր ՇՄԱԳ նախագիծ մշակվի, քանի որ հիմք ՀԵԿ-ի կառուցման ժամանակ վաղուց արդեն հնացած էր: ՀԵԿ-ը կառուցվել է՝ չունենալով նաև ջրօգտագործման թույլտվություն (սահմանում տրված ջրօգտագործման թույլտվությունը ՀԵԿ-ի կառուցման ու շահագործման պահին արդեն ուժը կորցրած էր, քանի որ սահմանված ժամկետներն անցել էին):

ՀԵԿ-ի գործունեության ու անբարեխիղճ կառավարման արդյունքում նմանատիպ իրավիճակ ստեղծվել է 2 անգամ. անցած տարի՝ հուլիսի 18-ին և սեպտեմբերի 10-ին, խողովակները, փորձարկման ժամանակ չլիմանալով ջրի բարձր ճնշմանը, պաթեյլ էին և ողողել գյուղացիների ցանքատարածքները:

Արգիճի փոքր ՀԵԿ-ը շահագործում է «Հիդրոկորպորացիա» ՍՊԸ-ն:

Հարգելի պարոն նախարար

Ահազանգում ենք ստեղծված տեխնածին աղետի մասին, և հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրինաի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ Գավառի Օրինա կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն նախորդ և և այս աղետների հետևանքով բնությանը և համայնքին հասցված վնասների և դրանց վերականգնման աջխատանքների մասին:

Խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն, արդյոք Արգիճի փոքր ՀԵԿ-ն աջխատում է նախագծին համապատասխան, ե՞րբ են իրականացվել տեսչական ստուգումներ, արդյո՞ք նախագիծն անցել է ՇՄԱԳ փորձաքննություն /տարեթիվը, եզրակացությունը/ և , ե՞րբ է ստացել ջրօգտագործման թույլտվությունը /ժամկետները/:

Կից հղումով կարող եք տեսնել ստեղծված իրավիճակը նաև լուսանկարները

[https://www.facebook.com/photo.php?v=556875487766337&set=vb.100003316729464&type=2&theater:](https://www.facebook.com/photo.php?v=556875487766337&set=vb.100003316729464&type=2&theater;)

Կանխավ շնորհակալություն  
Հարգանքով՝

Գավառի Օրինա կենտրոնի համակարգող՝

Լ. Ստյան











